Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 30-ի N 1010 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱՀԵՑՄԱՆ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ 3
2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 4
3. ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ 7
4. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 12

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Այս ծրագիրը հանդիսանում է ՀՀ հարկաբյուջետային կանոնների համակարգի վրա հիմնվող ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026թթ ծրագրի վերանայումը, որը մշակվել և ներկայացվել էր 2022-2024թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ միասին, և նախատեսում էր հինգ տարիների ընթացքում նվազեցնել կառավարության պարտքը ՀՆԱ 60%-ից: Հարկաբյուջետային կանոնների գործող համակարգը ձևավորվել է 2017թ-ի դեկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2018թ. հունվարի 27-ից ուժի մեջ մտած «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների նախագծերով, և ամբողջականացվել 2018թ-ի օգոստոսի 23-ին՝ ՀՀ կառավարության N 942-Ն որոշմամբ:

Հարկաբյուջետային կանոններն իրենց արտացոլումն են գտել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերում, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում, ինչպես նաև կառավարության համապատասխան որոշման մեջ: Սույն ծրագրի ներկայացումը բխում է վերոնշյալ իրավական կարգավորումներից, մասնավորապես՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.4 մասի «բ» կետից և ՀՀ կառավարության 2018թ-ի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշումից:

Համակարգի հիմնական կանոններն են.

- Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն պետական բյուջեի պակասուրդից:
- Կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի (ընթացիկ ծախսեր՝ առանց տոկոսավճարների) աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում Կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:
- Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:

- Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների առկայությամբ:

2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2000-2008 թվականների ընթացքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը զգալիորեն նվազել է, 2009-2020 թվականներին աճի ընդհանուր միտում ունեցել՝ 2020թ.-ին գերազանցելով 60% շեմը և գրանցելով պատմական առավելագույն ցուցանիշը, իսկ 2021թ.-ին սկսել է նվազել:

Գծապատկեր 1. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան 2000-2021թթ.[1]



Նախաճգնաժամային շրջանում տնտեսական բարձր աճի տեմպերի պայմաններում նվազման միտում դրսևորելուց հետո ՀՀ կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կտրուկ աճել է 2009 թ.-ին, երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ ՀՀ մակրոտնտեսական զարգացումների վրա ունեցած բացասական ազդեցություններին հակազդելու համար ՀՀ կառավարությունը վարել է հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն և պետական պակասուրդի հաշվին մեծածավալ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներարկել տնտեսություն: Տնտեսության անկմանը

[1] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն և վիճակագրական կոմիտե:

հակազդելու համար կառավարությունն ընդլայնել է թե՛ ամբողջական պահանջարկը՝ մեծացնելով պետական սպառման և ներդրումների կշիռը ՀՆԱ-ում և թե՛ ամբողջական առաջարկը՝ օժանդակելով տարբեր մակարդակներում գործարարությանը: Այս գործողությունների արդյունքում ՀՀ կառավարության պարտքը 2009թ-ին ավելացել է գրեթե 1.5 մլրդ ԱՄՆ դոլարով՝ հասնելով ՀՆԱ-ի 32.4%-ին 13.9% մակարդակից:

2014-2016թթ կառավարության պարտքի նշանակալի աճի հաջորդ ժամանակահատվածն է եղել, երբ պարտքը 3 տարվա ընթացքում աճել է ՀՆԱ-ի մեջ շուրջ 15.6 տոկոսային կետով՝ պայմանավորված տարածաշրջանային բացասական զարգացումների պայմաններում Հայաստանի տնտեսություն ներթափանցած շոկերին հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականությամբ արձագանքելու հանգամանքով:

2017-2019 թվականներին տնտեսական աճի վերականգնումը հնարավորություն է տվել ՀՀ կառավարությանը իրականացնել հարկաբյուջետային ճշգրտում: 2017թ.-ին պակասուրդի որոշակի նվազումը դանդաղեցրել է պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճը, իսկ 2018 և 2019 թվականներին պակասուրդի էական նվազման պայմաններում պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 3.6%-ային կետով՝ 2019 թվականի վերջին կազմելով 50.1% 2017թ.-ի 53.7% ցուցանիշի դիմաց:

ՀՀ կառավարության պարտքի գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ 2009թ.-ի տնտեսական ճգնաժամին հաջորդող ժամանակահատվածում, երբ պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը աճի միտում է ունեցել, աճի հիմնական գործոններն են եղել պետական բյուջեի առաջնային պակասուրդը, պետական բյուջեից զուտ վարկավորումը և դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը, իսկ ինչպես հետճգնաժամային, այնպես էլ դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի համար պարտքը նվազեցնող հիմնական գործոնը եղել է տնտեսական աճը:

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության պարտք առաջացնող գործոնների դինամիկան, % ՀՆԱ-ում[2]



2009թ. ճգնաժամին արձագանքման հետևանքով՝ պետական բյուջեի առաջնային պակասուրդի աճը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ի աճի հիմնական գործոնն է եղել: Պարտքի աճին նպաստել են նաև տնտեսական խորը անկումը և փոխարժեքի արժեզրկումը:

2014թ-ին արտաքին ցնցումների ազդեցությամբ ՀՀ դրամը կտրուկ արժեզրկվել է, և չնայած դոլարային արտահայտությամբ կառավարության պարտքի նվազմանը, դրամային արտահայտությամբ պարտքն աճել է մոտ 15 տոկոսով, իսկ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 3 տոկոսային կետով՝ գրեթե ամբողջությամբ այդ գործոնով պայմանավորված:

2015-2016թթ. մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով պետական բյուջեի առաջնային պակասուրդը զգալի ավելացվել է, ինչով բացատրվում է ՀՀ կառավարության պարտքի աճի հիմնական մասը: Իսկ 2016 թվականին, բացի առաջնային պակասուրդից, այդ տարվա ընթացքում պարտքի ավելացմանն էականորեն նպաստել է նաև իրական տոկոսադրույքի աճը, և կառավարության պարտքը հասել է ՀՆԱ-ի 51.9 տոկոսին:

2017թ.-ի առաջնային պակասուրդը պահպանվել է, սակայն վերջինին հակազդել է համեմատաբար բարձր տնտեսական աճը, ինչի շնորհիվ պարտքի աճի տեմպը դանդաղել է: 2018 և 2019 թվականներին կառավարությունը ապահովել է առաջնային հավելուրդներ, իսկ տնտեսական աճը շարունակել է հետճգնաժամային հատվածի միջինից բարձր մնալ: Արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել է գրեթե 4%-ային կետով:

[2] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներ:

2020 թվականին կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի շոկերի պայմաններում բյուջեի պակասուրդի ընդլայնումը, արձանագրված տնտեսական անկումը և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը հանգեցրին պարտք/ՀՆԱ ցուցանիշի 13.4%-ային կետով ավելացմանը, ինչի արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 63.5%: Սակայն 2021թ.-ին, հիմնականում պայմանավորված ՀՀ դրամի արժևորմամբ և տնտեսական վերականգմամբ, պարտքի բեռը որոշակի չափով նվազել է՝ կազմելով 60.3%:

3. ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ 60%-ը՝ կազմելով 60.3%: Համաձայն ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026թթ ծրագրի ՀՀ կառավարության պարտքը պետք է նվազեցվի ՀՆԱ 60% մակարդակից ներքև 5 տարիների ընթացքում, որով պայմանավորված՝ Ծրագրի սույն վերանայմամբ կանխատեսումները ներկայացվում են 4 տարվա հորիզոնով:

Հիմք ընդունելով ՀՀ հարկաբյուջետային կանոնների, որոնք ներկայացված են Բաժին 1-ում, սույն վերանայված ծրագրով նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ մինչև 2026թ. ապահովելով կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի 60%-ից ցածր մակարդակ: Հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ապահովմանն ուղղված հարկայուջետային շրջանակը, ներառյալ բյուջեի եկամուտների, ծախսերի և մյուս ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 1-ում: Ընդ որում, ծրագրի ցուցանիշներից 2022թ-ը ՀՀ ֆինանսների նախարարության սպասումներն են, 2023-2025թթ. ՄԺԾԾ հիմքում ընկած կանխատեսումներն են, իսկ 2026թ. ցուցանիշները՝ ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսումները:

Մասնավորապես, Ծրագրով նախատեսվում է աստիճանաբար բարելավել եկամուտ-ներ/ՀՆԱ ցուցանիշը՝ հարկային եկամուտների միջոցով: Իսկ ծախսային մասում նախատեսվում է ՀՆԱ-ի մեջ աստիճանաբար ավելացնել երկարաժամկետ տնտեսական աճ ստեղծող կապիտալ ծախսերը և միաժամանակ նվազեցնել ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը:

Աղյուսակ 1. Ծրագրի կանխատեսումների համառոտագիր

ՀՆԱ-ի նկատմամբ %	**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**
Պետական բյուջեի եկամուտներ	**25.0**	**24.9**	**25.1**	**25.4**	**25.7**
Պետական բյուջեի ծախսեր	**27.2**	**28.1**	**27.8**	**27.9**	**28.3**
Ընթացիկ ծախսեր	22.8	22.4	22.0	21.6	21.2

Կապիտալ ծախսեր	4.3	5.7	5.8	6.3	7.1
Պետական բյուջեի պակասուրդ	**-2.1**	**-3.2**	**-2.7**	**-2.5**	**-2.5**
Կառավարության պարտք	**58.4**	**57.9**	**56.0**	**55.0**	**53.5**

Կանխատեսումները և դրանց ճշգրտումները ինչպես 2022-2026 թթ. պարտքի բեռի նվազեցման ծրագրի, ինչպես նաև 2022թ-ի պետական բյուջեի նկատմամբ ներկայացված են Ներգիր 1-ում: Մասնավորապես, համեմատությունը ցույց է տալիս, որ նախորդ ծրագրի համեմատությամբ հետո բյուջեի եկամուտների, պակասուրդի և կապիտալ ծախսերի կանխատեսումները վերանայվել են դեպի վերև, իսկ ընթացիկ ծախսերի (2024-2026թթ. համար) և կառավարության պարտքի կանխատեսումները՝ դեպի ներքև:

Ներգիր 1

Հարկաբյուջետային կանխատեսումների համեմատական

Բյուջեի եկամուտներ		**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**
ՄԺԾԾ 2022-2024 և Պարտքի նվազեցման ծրագիր 2022-2026		24.0	24.1	24.3	24.8	25.1
Բյուջե 2022		24.8				
Պարտքի նվազեցման 2022-2026 վերանայված ծրագիր		25.0	24.9	25.1	25.4	25.7
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	2022-2026թթ. պարտքի նվազեցնան ծրագրի վերանայում	1.0	0.8	0.8	0.6	0.6
	Բյուջե 2022-ից 2022-2026թթ. պարտքի նվազեցման վերանայված ծրագիր	0.2				

Ընթացիկ ծախսեր						
ՄԺԾԾ 2022-2024 և Պարտքի նվազեցման ծրագիր 2022-2026		22.7	22.4	22.2	21.8	21.4
Բյուջե 2022		23.4				
Պարտքի նվազեցման 2022-2026 վերանայված ծրագիր		22.8	22.4	22.0	21.6	21.2
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	2022-2026թթ. պարտքի նվազեցնան ծրագրի վերանայում	0.1	0.0	-0.2	-0.2	-0.2
	Բյուջե 2022-ից 2022-2026թթ. պարտքի	-0.6				

	նվազեցման վերանայված ծրագիր					

Կապիտալ ծախսեր						
ՄԺԾԾ 2022-2024 և Պարտքի նվազեցման ծրագիր 2022-2026		3.9	3.8	4.0	5.0	5.7
Բյուջե 2022		4.3				
Պարտքի նվազեցման 2022-2026 վերանայված ծրագիր		4.3	5.7	5.8	6.3	7.1
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	2022-2026թթ. պարտքի նվազեցնան ծրագրի վերանայում	0.4	1.9	1.8	1.3	1.4
	Բյուջե 2022-ից 2022-2026թթ. պարտքի նվազեցման վերանայված ծրագիր	0.0				

Պակասուրդ						
ՄԺԾԾ 2022-2024 և Պարտքի նվազեցման ծրագիր 2022-2026		2.5	2.1	1.9	1.9	1.9
Բյուջե 2022		3.0				
Պարտքի նվազեցման 2022-2026 վերանայված ծրագիր		2.1	3.2	2.7	2.5	2.5
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	2022-2026թթ. պարտքի նվազեցնան ծրագրի վերանայում	-0.4	1.1	0.8	0.6	0.6
	Բյուջե 2022-ից 2022-2026թթ. պարտքի նվազեցման վերանայված ծրագիր	-0.9				

Կառավարության պարտք						
ՄԺԾԾ 2022-2024 և Պարտքի նվազեցման ծրագիր 2022-2026		60.5	58.7	56.8	55.2	53.8
Բյուջե 2022		60.2				
Պարտքի նվազեցման 2022-2026 վերանայված ծրագիր		58.4	57.9	56.0	55.0	53.5

Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	2022-2026թթ. պարտքի նվազեցնան ծրագրի վերանայում	-2.1	-0.8	-0.8	-0.2	-0.3
	Բյուջե 2022-ից 2022-2026թթ. պարտքի նվազեցման վերանայված ծրագիր	-1.8				

Ծրագրի ռիսկերը

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ամենահավանական հետագիծը և կանխատեսումների շուրջ անորոշությունը պատկերավոր ներկայացնելու համար կառուցվել է կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկ (fan chart): Գրաֆիկը կառուցվել է ՀՀ կառավարության պարտքի վրա ազդեցություն ունեցող համապատասխան մակրոտնտեսական փոփոխականների (բյուջեի առաջնային պակասուրդ, տնտեսական աճ, պարտքի իրական տոկոսադրույք, իրական փոխարժեք) վրա ցուցանիշների պատմական էվոլյուցիայից պրոյեկտված շոկերի սիմուլյացիաներով, և ցույց է տալիս կանխատեսվող ժամանակահատվածում պարտք/ՀՆԱ հարաբերակցության որոշակի միջակայքերում գտնվելու հավանականությունները: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի հավանական հետագծերը կառուցվել են՝ հաշվի առնելով նշված փոփոխականների պատմական ժամանակային շարքերի վիճակագրական հատկությունները և փոխադարձ կապերը, ինչպես նաև վերջիններիս կանխատեսումները[3]:

Ստորև պատկերված հավանականությունների բաշխման գրաֆիկը ցույց է տալիս Ծրագրի վերանայված սցենարի՝ մինչև 2026թ-ը Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազեցման ռիսկերը:

Գծապատկեր 3. ՀՀ կառավարության պարտքի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկը (Fan Chart)[4]

[3] Գրաֆիկը կառուցման մեթոդաբանության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս ԱՄՀ կողմից հրապարակված «Staff Guidance Note For Public Debt Sustainability Analysis In Market-Access Countries» (2013) փաստաթղթում, հետևյալ հղմամբ՝ https://www.imf.org/external/np/pp/eng/2013/050913.pdf:

[4] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներ:



Համաձայն իրականացված սիմուլյացիաների, 10%-ից 90% հավանականային միջակայքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2026թ-ին կգտնվի 46.5%-ից 69.4% միջակայքում, իսկ 25%-ից 75% հավանականային միջակայքում՝ 53.2%-ից 61.5%: 70%-ից բարձր հավանականությամբ ՀՀ կառավարության պարտքը 2026թ-ին չի գերազանցի ՀՆԱ 60%-ը:

Հավանականությունների բաշխմանը կարելի է ծանոթանալ նաև ներքոհիշյալ աղյուսակում:

Աղյուսակ 2. Կառավարության պարտք/ՀՆԱ հետագծի հավանականային բաշխումը

Հավանականային միջակայքը	Տրված հավանականային միջակայքում կառավարության պարտք/ՀՆԱ առավելագույն մակարդակը				
	2022	**2023**	**2024**	**2025**	**2026**
Մինչև 10%	52.0	48.3	45.1	43.2	40.6
10%-25%	55.3	53.0	49.9	48.5	46.5
25%-50%	59.3	58.3	56.5	55.2	53.2
50%-75%	63.3	63.6	63.0	63.1	61.5
75%-90%	67.0	68.9	69.6	69.9	69.4

Ծրագրի ռիսկերի ուսումնասիրությունը կառավարության պարտքը ձևավորող գործոնների պատմական միտումների հիման վրա ցույց տվեց, որ ծրագրված սցենարը ռիսկեր է պարունակում պարտքի թիրախային ցուցանիշի ապահովման տեսանկյունից: Այդ ռիսկերը նվազեցնելու համար ՀՀ կառավարությունը ներկայացնում է կանխատեսվող ժամանակահատվածի համար ծրագրված միջոցառումները, որոնք վերաբերում են պետական բյուջեի եկամուտների ձևավորմանը, ծախսերի իրականացմանը և պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը: Ներկայացվող միջոցառումները միտված են մի կողմից կանխատեսվող հորիզոնում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի թիրախային ցուցանիշի ապահովմանը, մյուս կողմից՝ երկարաժամկետ տնտեսական աճին և հարկաբյուջետային կայունության ամրապնդմանը՝ ապահովելու պարտքի կայունությունը երակարաժամկետ հատվածում:

4. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի հիմքում ընկած կանխատեսումների սցենարին համահունչ ստորև ներկայացվում են Ծրագրի հիմնական միջոցառումների ուղղությունները:

4.1. Պետական բյուջեի եկամուտներ

ՀՀ կառավարությունը կառավարության պարտքի բեռի նվազեցման Ծրագրի իրագործման նպատակով ծրագրում է իրականացնել պետական բյուջեի եկամուտների քաղաքականության միջոցառումներ, որոնք ներառում են հարկային օրենսդրությունը և հարկային վարչարարությունը: Հարկային օրենսդրության միջոցառումները ներառում են եկամտային հարկի դրույքաչափի աստիճանական նվազում՝ տարեկան 1.0 տոկոսային կետով մինչև 2023 թվականը, ինչպես նաև ակցիզային հարկերի բեռի բարձրացումը: Առաջին միջոցառման (նախկինում շահութահարկի դրույքաչափի նվազեցման հետ միասին) նպատակը արտահանելի հատվածի և երկարաժամկետ տնտեսական աճի խթանումն է, իսկ երկրորդինը՝ տնտեսության վրա նվազագույն խեղաթյուրող ազդեցություններով լրացուցիչ հարկային եկամուտների գեներացումը, որոնք հեռանկարում թույլ կտան նվազեցնել պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: Հարկային օրենսդրության միջոցառումների զուտ ազդեցությունը հարկային եկամուտների վրա դրական է գնահատվում 2022 թվականին և բացասական՝ 2023 թվականին:

Հարկային օրենսդրության բարեփոխումների գծով, բացի վերը նշված փոփոխությունները, որոնք արդեն իսկ արտացոլված են օրենսդրությունում, ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվում են մի շարք հավելյալ միջոցառումներ, որոնց

իրականացման պարագայում կանխատեսվող հորիզոնում հարկային եկամուտների վրա կլինեն դրական ազդեցություններ: Հարկային քաղաքականության միջոցառումները մասնավորապես ներառում են ԱԱՀ-ի գծով որոշ արտոնությունների վերացում, շրջանառության հարկի դրույքաչափերի վերանայում, միկրոձեռնարկատիրության համակարգում թույլատրված գործունեության ոլորտների սահմանափակում և միկրոձեռնարկատիրության համակարգի սուբյեկտների կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամուտը նվազեցնելու հնարավորության վերացում, ռոյալթիի համակարգի բարեփոխում, խաղային ոլորտում պետական տուրքի դրույքաչափի վերանայում և այլ փոփոխություններ:

Հարկային վարչարարության գծով ծրագրված միջոցառումները, որոնք սահմանված են ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված 2021-2026թթ գործունեության միջոցառումների ծրագրով (տես՝ Հավելված 1) և ՀՀ կառավարության 12.08.2021թ.-ի N 1323-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարությամբ (տես՝ Հավելված 2), թույլ կտան միաժամանակ արձանագրել հարկերի և տուրքերի շարունակական բարելավում ՀՆԱ նկատմամբ՝ հնարավորություն տալով պարտքի երկարաժամկետ կայունությանը նպաստելուն զուգահեռ սահմանված ժամանակահատվածում հասնել կառավարության պարտք/ՀՆԱ թիրախային ցուցանիշին:

Կանխատեսվող հորիզոնում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կբարելավվի 1.7%-ային կետով՝ հասցնելով 25.2%-ի: Սակայն, հաշվի առնելով ծրագրված ժամանակահատվածում ոչ հարկային եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների նվազումը, պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության բարելավումը կկազմի 0.7%-ային կետ:

Աղյուսակ 2. Բյուջեի եկամուտների գծով իրականացվող միջոցառումներն ըստ ուղղությունների

	2023	**2024**	**2025**	**2026**	**Ընդամենը ավելացում, %-ային կետ**
Բյուջեի եկամուտների ավելացում, %-ային կետ ՀՆԱ-ում	-0.2	0.2	0.3	0.3	0.7
Հարկերի և տուրքերի ավելացում, %-ային կետ ՀՆԱ-ում	0.5	0.4	0.4	0.4	1.7
Հարկային օրենսդրություն, %-ային կետ ՀՆԱ-ում	-0.2	-	-	-	-0.2

Հարկային վարչարարություն, %-ային կետ ՀՆԱ-ում	0.7	0.4	0.4	0.4	1.9
Ոչ հարկային եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ	-0.3	-0.1	0.0	0.0	-0.5

Հարկային վարչարարության միջոցառումներ սահմանվել են նաև ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարությամբ (Հավելված 2):

4.2. Պետական բյուջեի ծախսեր

ՀՀ կառավարությունը պարտքի բեռի նվազեցման վերանայված ծրագրի իրականացման համար, հարկաբյուջետային կանոններին համահունչ, ծրագրում է 2023-2026թթ նվազեցնել պետական բյուջեի ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ում շուրջ 1.6 տոկոսային կետով մինչև 2026 թվականը: Միաժամանակ, նախատեսվում է ընթացիկ ծախսերի կշռի նվազեցմանը զուգահեռ մեծացնել տնտեսության երկարաժամկետ աճին նպաստող կապիտալ ծախսերի կշիռը՝ մինչև 2026 թվականը հասցնելով դրանք ՀՆԱ-ի 7.1%-ին (ընդհանուր առմամբ բարձրացնելով ՀՆԱ-ի 2.7 տոկոսային կետի չափով 2022թ.-ի համեմատ), ինչը հնարավորություն կտա տնտեսական աճի արագացման շնորհիվ նվազեցնել կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը:

Աղյուսակ 3. Ընթացիկ և կապիտալ ծախսերի ծրագրված ուղղությունները

	2023	**2024**	**2025**	**2026**	**Ընդհանուր նվազեցում, %-ային կետ ՀՆԱ-ում**
Պետական բյուջեի ծախսերի կրճատում, %-ային կետ ՀՆԱ-ում	-0.9	0.3	-0.1	-0.4	**-1.1**
ընթացիկ ծախսերի գծով	0.4	0.4	0.4	0.4	**1.6**
կապիտալ ծախսերի գծով	-1.3	-0.2	-0.5	-0.7	**-2.7**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 18.11.2021Թ. N1902-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2021-2026ԹԹ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ 2022-2026ԹԹ. ՆՊԱՍՏԵԼՈՒ ԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ/ՀՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

N/N	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	6	7	8
1.	Էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների արդիականացում	1.1 Վերլուծական գործիքների կատարելագործում և ավտոմատացում	Ստանդարտ վերլուծությունների ավտոմատացված եղանակով իրականացվող գործիքների ընդլայնում և ներդրում: Արդյունքում գործում են 59 ստանդարտ վերլուծական հաշվետվական ձևեր և առնվազն 66 ռիսկային չափանիշներ:		2021-2026թթ. (շարունակական)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0 մլն դրամ)
			ՊԵԿ մոնիթորինգային կենտրոնի կարողությունների ընդլայնում: Իրականացվող վերլուծությունների կենտրոնացում մոնիթորինգային կենտրոնում: Արդյունքում ռիսկային չափանիշների ավելացման միջոցով ծանուցվող հարկ		2021-2026թթ. (շարունակական)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (15.0 մլն դրամ)

			վճարողների շրջանակը կընդլայնվի՝ առնվազն 15%-ով:			
		1.5 Երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների մշակման էլեկտրոնային համակարգերի կատարելագործում	Երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների՝ շարժական գույքի սեփականատերերի և վերջիններիս փոփոխությունների վերաբերյալ էլեկտրոնային համակարգում տեղեկատվության հասանելիության ապահովում: Արդյունքում մշակված և ներդրված են շարժական գույք հաշվառող մարմիններից տվյալների ստացման WEB համակարգերը:	Ոստիկանություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարություն Քաղաքացիական ավիացիայի կոմիտե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (50.0 մլն դրամ)
		1.6 Մեծ Ծավալի Տվյալների (Big Data) ժամանակակից կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման գործիքների ստեղծում, գործիքակազմի ընդլայնում և զարգացում	Անալիտիկ-վերլուծական հաշվետվությունների ներդրում, տվյալների վերլուծության ժամանակակից գիտական տեխնոլոգիաների կիրառում (data analysis) հարկային թիրախային վարչարարության իրականացման նպատակով: Արդյունքում ՊԵԿ հարկային համակարգի բոլոր աշխատակիցներն օգտագործում են այդ գործիքները և առնվազն 5 գերատեսչություն օգտվում են	Բարձր տեխնոլո-գիական արդյունաբերության նախարարություն	2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0 մլն դրամ)

			ծրագրավորված հաշվետվություններից:			
		1.7 Ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգերի մշակում	Տեղեկատվական հոսքերի կառավարման և վերլուծությունների համակարգի ներդրում: Արդյունքում ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով տարրերը ներդրված են «Ստուգման ենթակա հարկ վճարողներ», «Ապրանքների հետագծելիություն» համակարգերում:	Բարձր տեխնոլո-գիական արդյունաբերության նախարարություն	2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (380.0 մլն դրամ)
		1.8 Էլեկտրոնային կառավարման համակարգերի հնարավորությունների հզորացում և կատարելագործում	Էլեկտրոնային կառավարման համակարգերի աշխատանքի հնարավորությունների հզորացում և կատարելագործում, համակարգի անխափան աշխատանքի ապահովում: Ծրագրի ավարտին հարկային վարչարարության արդյունավետության ցուցանիշի 0.5-ից 0.7 տոկոսային կետով բարելավում: Արդյունքում ներդրված է և գործում է նոր սերվերային համակարգ, էլեկտրոնային	Բարձր տեխնոլո-գիական արդյունաբերության նախարարություն	2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (500.0 մլն դրամ)

			համակարգերը աշխատում են անխափան 24/7 ռեժիմով:			
		1.9 Հաշվարկային փաստաթղթերում (հարկային հաշիվներ, ՀԴՄ կտրոններ և այլն) արտացոլվող տվյալների արտածման հնարավորության ապահովում	Հաշվարկային փաստաթղթերի տվյալների հիման վրա հարկ վճարողների կողմից իրացվող ապրանքների գների համեմատության և դրա արդյունքներով գնային խախտումներ թույլ տվող ռիսկային հարկ վճարողների վերհանման հնարավորության ապահովում: Արդյունքում համակարգը ներդրված է:		2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (50.0 մլն դրամ)
3.	**Հարկային հսկողության ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ ստվերի կրճատում**	3.1 Տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության օրինականության կամ գործարքների լիարժեք փաստաթղթավորման կարգապահության բարելավում, հսկողական գործիքակազմի կատարելագործում	Ստվերային տնտեսության կրճատում, հարկային կարգապահության բարձրացում, հարկային եկամուտների ավելացում, որի արդյունքում, ծրագրի իրականացման ավարտին Հարկեր/ ՀՆԱ ցուցանիշն այլ հավասար պայմաններում կբարելավվի շուրջ 2.6 տոկոսային կետով: Յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի քանակի առնվազն 7 % և իրացման շրջանառության առնվազն 10 % աճ:		2021-2026թթ. (շարունակական)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

		3.2 Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծում իրականացնող հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավում և հսկողական գործիքի կատարելագործում	Ստվերային տնտեսության կրճատում, հարկային կարգապահության բարձրացում, հարկային եկամուտների ավելացում: Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծումների նվազագույնը 20%-ն ուսումնասիրված են:		2021-2026թթ. (շարունակական)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (300.0 մլն դրամ)
		3.3 Հարկային պարտավորություն ների հաշվարկման մեխանիզմների կատարելագործում	Հարկերի հաշվարկման անուղղակի եղանակների կատարելագործում և միջազգային փորձին համապատասխան հարկային պլանավորման չարաշահման կանխարգելման կանոնների ներդրում: Արդյունքում համապատասխան օրենսդրական ակտերն ընդունված են:	Ֆինանսների նախարարություն	2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի պահանջվում
			Տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կատարելագործում: Արդյունքում տրանսֆերային գնագոյացմանն առնչվող		2022-2026թթ. (շարունակական)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (տարեկան 100.0 հազ. ԱՄՆ

			ենթաօրենսդրական ակտերը և ուղեցույցերն ընդունված են:			դոլարին համարժեք ՀՀ դրամ)
		3.4 Ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի ոլորտային հարկային պոտենցիալի գնահատման համակարգի կատարելագործում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համագործակցությամբ՝ վերջինիս կողմից տրամադրվելիք հնարավոր տեխնիկական աջակցության շրջանակներում	Ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով՝ տնտեսական գործունեության ոլորտների հարկային պոտենցիալի և հարկային վարչարարության ճեղքի գնահատում: Արդյունքում ըստ ոլորտների ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով հարկային ճեղքի գնահատականն ուղարկված է ՀՀ ֆինանսների նախարարություն:		2021-2023թթ.	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ
		3.5 Ռիսկերի կառավարման համակարգերի վերանայում և կատարելագործում	Համալիր հարկային ստուգումների ընտրողականության էլեկտրոնային համակարգի վերանայում: Արդյունքում ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրո-նային ավտոմատ կառավարման համակարգում վերանայված ռիսկային չափանիշների և ժամանակակից վերլուծական		2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (100.0 մլն դրամ ըստ ՊԵԿ ռազմավարությամբ սահմանված ժամանակացույցի)

			գործիքների հիման վրա համապատասխան ծրագրային փոփոխությունները գործարկված են:			
4.	Մաքսային ռիսկերի կառավարման գործիքակազմի կատարելագործմամբ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում	4.1 Մաքսային հսկողության գործիքակազմի կատարելագործում և պարզեցում	Ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության պարզեցում և համակարգի ավտոմատացում: Արդյունքում ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության պարզեցված և ավտոմատացված համակարգը գործարկված է:		2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (90.0 մլն դրամ)
		4.2 Մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերի ներդաշնակեցում	Մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերի ինտեգրում, համադրելիության մոդելի ձևավորում, հարկային և մաքսային մեծածավալ շտեմարանների տվյալների համադրման և վերլուծության արդյունքում տնտեսավարող սուբյեկտների ճիշտ թիրախավորում: Արդյունքում մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերն ինտեգրված են:		2023թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0 մլն դրամ)
		4.3 «Մաքսային իրավախախտումների	Մաքսային ոլորտում իրավախախտում թույլ տված		2023թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով

		միասնական շտեմարան» համակարգի ներդրում	տնտեսավարողների թիրախավորում: Արդյունքում համակարգը ներդրված է և ներդաշնակեցված է «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի «Ռիսկերի կառավարում» համակարգի հետ: ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կիրառվող ձևաթղթերը, ակտերը և արձանագրությունները թվայնացված են:			չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (35.0 մլն դրամ)
		4.4 Փոստային (սուրհանդակային) առաքանիների հետ կապված մաքսային գործառնությունների կանոնակարգման նպատակով ռիսկի ցուցիչների մշակում՝ անձնագրային և ՀԾՀ տվյալների միջոցով սահմանահատումների հաճախականության ռիսկի ցուցիչի ձևավորում, ապրանքների քաշի և սահմանահատումների հաճախականության տվյալների հիման վրա ռիսկի ցուցիչի մշակում	Ռիսկի ցուցիչների հիման վրա ներմուծվող առաքանիների՝ ըստ անձնական կամ ոչ անձնական օգտագործման դասակարգում, քաղաքացիների հետ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ֆիզիկական շփման նվազեցում: Արդյունքում ռիսկի ցուցիչների հիման վրա ներմուծվող առաքանիները հնարավոր կլինի դասել անձնական օգտագործման կամ ոչ անձնական օգտագործման, քաղաքացիների հետ	Ազգային անվտանգության ծառայություն	2022թ. հունիսի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (30.0 մլն դրամ)

			մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ֆիզիկական շփումը կհասցվի նվազագույնի: Փոստային (սուրհանդակային) առաքանիներից գանձվող մաքսային վճարների ավելացում առնվազն ոչ անձնական օգտագործման փոստային առաքանիների ներմուծման ծավալի աճի չափով:			

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԵՂՔԸ ՆՎԱԶԵՑՆՈՂ) ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՔ 2022-2026ԹԹ. ՆՊԱՍՏԵԼՈՒ ԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ/ՀՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ ԸՍՏ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 12.08.2021Թ. ԹԻՎ 1323-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ՊԵԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ

N/N	Միջոցառումներ	Միջոցառումների կատարմանն ուղղված գործողություններ	Միջոցառումների կատարմամբ ակնկալվող արդյունքներ	Չափելի ցուցանիշներ	Միջոցառումների վերջնաժամկետներ	Ռազմավարական ծրագրի բյուջեն՝ ըստ տարիների (մլն ՀՀ դրամ)
1	2	3	4	6	7	8
2.1.1	Հզորացնել հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի կարողությունները՝ ռիսկերի շրջանակի ընդլայնմամբ և դրանց բացահայտման վերլուծական մեխանիզմների ավտոմատացմամբ՝ նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը	ա. այլ երկրների փորձի ուսումնասիրություն, բ. հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի գործող չափանիշների վերանայման և նոր չափանիշների ներդրման նպատակահարմարության որոշում, գ. տեխնիկական նկարագրի կազմում, դ. գնման գործընթացի կազմակերպում, ե. տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում,	Հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի կարողությունները ընդլայնվել են: Ռիսկերի վերլուծության մեխանիզմները ավտոմատացված են:	Ռիսկերի կառավարման համակարգում օրական մշակվում է առնվազն 200.000 տեղեկատվական տողերի քանակ: Ներկայումս օրական մշակվում է 100.000 տեղեկատվական տող:	31.12.2024թ.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (100.0)

		զ. համակարգի մշակում, ծրագրավորում, է. համակարգի պիլոտային շահագործում, ը. համակարգի հանձնում շահագործման:				
2.1.3	Կատարելագործել և ընդլայնել ՊԵԿ տեղեկատվական համակարգերում առկա՝ գործարքները հավաստող փաստաթղթերի, հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների և այլ տեղեկատվության վերլուծության հիման վրա ռիսկային չափանիշներով հարկ վճարողների գնահատման և ինքնաշխատ ծանուցման համակարգը	ա. հարկ վճարողների ռիսկայնության գնահատման նոր չափանիշների մշակում և ծրագրավորում, բ. ռիսկայնության գնահատման նոր չափանիշների հիման վրա ռիսկային հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցումների ուղարկում:	Հարկ վճարողների գնահատման և ինքնաշխատ ծանուցման համակարգը կատարելագործված է: Հարկ վճարողների ռիսկայնության գնահատման չափանիշներն ընդլայնված են:	ա. Ռիսկային չափանիշների ավելացում՝ դրանց թիվը հասցնելով առնվազն 61-ի: Ներկայումս ծանուցումներ ուղարկվում են ռիսկային 16 չափանիշների գծով: բ. Ռիսկային չափանիշների ավելացման միջոցով ծանուցվող հարկ վճարողների շրջանակի ընդլայնում՝ գործող հարկ վճարողների մեջ ծանուցված հարկ վճարողների տեսակարար կշիռը 13%-ից բարձրացնելով 30%-ի:	31.12.2025թ.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (25.0)

2.1.5	Ներդնել շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի գործունեության վերահսկողությունն իրականացնող էլեկտրոնային կառավարման համակարգեր	ա. ոլորտի ներկա վիճակի գնահատման և արդիականացման նպատակով բիզնես գործընթացների ուսումնասիրություն, բ. օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացման նախաձեռնում, գ. տեխնիկական նկարագրի կազմում, դ. տեխնիկական նկարագրի ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին և Թվայնացման խորհրդին, ե. գնման գործընթացի կազմակերպում, զ. տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում, է. համակարգի մշակում, ծրագրավորում, ը. համակարգի պիլոտային շահագործում, թ. համակարգի հանձնում շահագործման, ժ. համակարգի աշխատանքի մոնիթորինգ և վերահսկում:	Շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի գործունեության վերահսկողության էլեկտրոնային կառավարման համակարգը ներդրված է:	Շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի գործունեություն իրականացնող հարկ վճարողների թվաքանակի աճ՝ առնվազն 10 տոկոսով:	31.12.2025թ.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (500.0)
				Շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից ապահովվող եկամուտների աճ՝ առնվազն 20 տոկոսով:		

2.1.9	Մշակել և ներդնել ոլորտային հարկային կարգապահության բարելավման ծրագիր, իրականացնել ծրագրի մոնիտորինգ և, ըստ անհրաժեշտության, վերանայել ծրագիրը	ա. ոլորտային հարկային կարգապահության բարելավման ծրագրի (ծրագրերի) մշակում և ներդրում, բ. ոլորտային հարկային կարգապահության բարելավման ծրագրի (ծրագրերի) մոնիտորինգի իրականացում, գ. իրականացված մոնիտորինգի արդյունքներով ծրագրի (ծրագրերի) վերանայման վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, առաջարկությունների ներկայացում և հետագա ընթացքի ապահովում:	Իրականացվել է առնվազն 1 հարկային կարգապահության բարելավման ծրագիր:	Ընտրված հարկ վճարողների խմբում նվազել է բարձր ռիսկային հարկ վճարողների քանակը առնվազն 20 տոկոսով:	31.12.2022թ.	0
2.1.13	Կատարելագործել էլեկտրոնային առևտրի հարկային հսկողության մեխանիզմները, ՊԵԿ կարողությունները	ա. օրենսդրական կարգավորումների ուսումնասիրում և, ըստ անհրաժեշտության, օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ձևավորում և հետագա ընթացքի ապահովում, բ. էլեկտրոնային առևտրի հսկողություն իրականացնող հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային	Էլեկտրոնային առևտրի հարկային հսկողության գործընթացում ՊԵԿ կարողություններն ընդլայնվել են:	Էլեկտրոնային առևտրով զբաղվող՝ հարկային մարմնում չգրանցված ձեռնարկատիրական գործունեության դեպքերի բացահայտումների քանակի աճ՝ առնվազն 15 տոկոսով:	31.12.2025թ.	0

		ունակությունների բարձրացում, գ. էլեկտրրոնային առևտրի հսկողության գործիքակազմի ընդլայնում:		Հսկողական աշխատանքների արդյունքում էլեկտրոնային առևտրով զբաղվող հարկ վճարողներին լրացուցիչ առաջադրված հարկային պարտավորությունների աճ՝ առնվազն 10 տոկոսով:		
2.2.4	Կատարելագործել տրանսֆերային գնագոյացման ուղղությամբ հարկային հսկողությունը1	ա. տրանսֆերային գնագոյացման ստուգումների վերաբերյալ ուղեցույցի մշակում, բ. տրանսֆերային գնագոյացման ստուգումներ իրականացնող հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների բարձրացման նպատակով վերապատրաստման միջոցառումների իրականացում, գ. տրանսֆերային գնագոյացման ռիսկերի	Տրանֆերային գնագոյացման ուղղությամբ իրականացվում է արդյունավետ հարկային հսկողություն:	Մշակվել է տրանսֆերային գնագոյացման ստուգումների վերաբերյալ ուղեցույցը, մշակվել և ներդրվել է տրանսֆերային գնագոյացման ռիսկերի վերհանման համակարգ: Տրանսֆերային գնագոյացման ստուգումներ իրականացնելու նպատակով	31.12.2022թ.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0)

		վերհանման համակարգի մշակում և ներդրում, դ. տրանսֆերային գնագոյացման ստուգումներ իրականացնելու նպատակով համապատասխան առևտրային բազաներին անդամակցություն, ե. միջազգային ստանդարտներին համապատասխան՝ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման եռաստիճան համակարգի մշակում և ներդրում:		վերապատրաստված են առնվազն 10 հարկային ծառայողներ: Առկա է անդամակցություն առևտրային տվյալների բազաներին և ներդրվել է տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման եռաստիճան համակարգը:		
2.2.6	Կատարելագործել ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի ոլորտային ստվերի և հարկային պոտենցիալի գնահատման մոդելը, հնարավորության դեպքում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի օժանդակությամբ	ա. տնտեսության հարկունակ ոլորտներում հարկային պոտենցիալի, ստվերի և հարկային ճեղքի գնահատման մեկ միասնական մեթոդաբանության մշակում, որը կլինի ընդունելի և կիրառելի առնվազն հարկային քաղաքականության և վարչարարության ազդեցությունների գնահատման տեսանկյունից, բ. ընդունված մեթոդաբանության հիման վրա համապատասխան ծրագրային մոդուլի	Իրականացվում է տնտեսության հարկունակ ոլորտների հարկային պոտենցիալի, ստվերի և հարկային ճեղքի գնահատում՝ ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով:	Կազմվել է ըստ ոլորտների հարկային պոտենցիալի, ստվերի և ճեղքի գնահատականը:	31.12.2022թ.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (7.0)

		նախագծման (կատարելագործման) աշխատանքների իրականացում, որի միջոցով կիրականացվի հարկային պոտենցիալի, ստվերի և հարկային ճեղքի գնահատում:				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ